<Անալիտիկ> ՓԲԸ 2011թ. տարեկան ընդհանուր ժողովի

Օրակարգ

1. Ընկերության 2011թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հաստատում:
2. Ընկերության վերստուգողի եզրակացության ներկայացում:
3. Ընկերության 2011թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում:
4. Ընկերության տարեկան շահույթի/վնասի/ հաշվի հաստատում:
5. Ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժինների վճարման չափի հաստատում:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Անալիտիկ» ՓԲԸ 2011թ.

տարեկան ընդհանուր ժողովի (Բաժնետիրոջ որոշման)

ք. Երևան 12 հունիսի 2012թ.

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

1. Ա.Մովսիսյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար՝ ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորություններն իրականացնող 100% ձայնի իրավունքով
2. Կ. Ղահրամանյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավար
3. Բ. Գյուլումյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
4.Գ.Սիմոնյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ
5.Ռ. Փիլոյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
5. Ս.Սարգսյան	«Անալիտիկ» ՓԲԸ գլխավոր տնօրեն խորհրդակցական ձայնի իրավունքով
6. Վ. Մուրադյան	«Անալիտիկ» ՓԲԸ վերստուգող

Ժողովի նախագահ՝ Ա. Մովսիսյան

Քարտուղար՝ Ռ. Փիլոյան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ընկերության 2011թ տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հաստատում:
2. Ընկերության վերստուգողի եզրակացության ներկայացում:
3. Ընկերության 2011թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում:
4. Ընկերության տարեկան շահույթի /վնասի/ հաշվի հաստատում:
5. Ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժինների վճարման չափի հաստատում:

ՀԱՐՑ 1

Լսվեց ընկերության 2011թ. ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունը (կցվում է):

Զեկուցող - Ս. Սարգսյան

ՀԱՐՑ 2

Լսվեց ընկերության վերստուգողի եզրակացությունը (կցվում է):

Ներկայացնող – Վ. Մուրադյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ի գիտություն ընդունելով վերստուգողի եզրակացությունը, ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67 հոդվածի 1-ին մասի «ժբ» ենթակետով, հաստատել «Անալիտիկ» ՓԲԸ 2011թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունը:

ՀԱՐՑ 3

Լսվեց ընկերության 2011թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատման հարցը (կցվում է):

Զեկուցող- Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67 հոդվածի 1-ին մասի «ժբ» ենթակետով, հիմք ընդունելով ընկերության ֆինանսա-տնտեսական գործունեության վերաբերյալ գլխավոր տնօրենի հաշվետվությունը և վերստուգողի եզրակացությունը, հաստատել ընկերության 2011թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռը:

ՀԱՐՑ 4

Լսվեց ընկերության 2011թ. շահույթի /վնասի/ հաշվի հաստատման հարցը (տեղեկանքը կցվում է):

Զեկուցող - Ս.Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67 հոդվածի 1-ին մասի «ժբ» ենթակետով, հաստատել ընկերության 2011թ. տարեկան զուտ շահույթը՝ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո 3857.0 հազ. դրամ և զուտ շահույթը՝ հաշվի առած ավելացումները /շահութաբաժնի հաշվարկի 060 տող/ 4697.0 հազ. դրամ:

ՀԱՐՑ 5

Լսվեցին ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժնի վճարման չափի հաստատման հարցերը /առաջարկությունը կցվում է/:

Զեկուցող - Ս.Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67հոդվածի 1-ին մասի «ժբ» ենթակետով, հաստատել ընկերության 2011թ. տարեկան զուտ շահույթի բաշխումը հետևյալ համամասնությամբ.

ՀՀ կառավարության 03.03.2011թ. թիվ 202-Ն որոշման համաձայն, զուտ շահույթի /հաշվի առած ավելացումները/ 50%-ը՝ 2348.5 հազ. դրամը փոխանցել պետբյուջե, որպես պետական մասնակցության դիմաց շահութաբաժին.

զուտ շահույթի 5%-ը՝ 193.0 հազ. դրամն ուղղել ընկերության պահուստային հիմնադրամ.

մնացած 1315.5 հազ. դրամը /3857.0-2348.5-193.0/ թողնել որպես չբաշխված շահույթ:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ա.ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ռ. ՓԻԼՈՅԱՆ